

ԶԵԿՈՅՑ Հ. Բ. Ը ՄԻՈՒԹԵԱՆ

ՅՐԱՀԻՒՐԱԳԻՐ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Հայկական Քարեգործական Ընդհանուր Միութեան Կեդրոնական Վարչական Ժողովը այսու կը հրամիրէ Միութեան բոլոր իրաւասու անդամները ներկայ գտնուելու 61րդ Ընդհ. ժողովին, որ պիտի գումարուի ԾԱԲԱՓ, ՀՈԿ ՏԵՄԲԵԲ 19, 1974, առաւօտեան ժամը 10.00ին, Առաջնորդարանի Կիւլլապի կիւլպէնեամ Մշակութային Կեդրոնի Գավուքնեան Սրահին մէջ, 630 Մեքրես եվրոնի, Նիւ Եորփ, Ն. Ե., ԱՄՆ:

Ներկայս 61րդ Ընդհ. ժողովին համար տրուած միակ հրատիրագիրն է: Կը խնդրեմ հետեւարար Միութեան յարգոյ իրաւասու անդամներէն, որ անձնապիս ժողովին ներկայ ըլլան վերոյիշեալ բուականին եւ կամ ամենէն ուշը մինչև Սեպտեմբեր 24, 1974, իրենց փոխանորդագրերը յանձնեն Հ. Բ. Ը. Միութեան Ընդհանուր Տնօրէնին, կամ զանոնի դրկես հետեւալ հասցէին: —

Armenian General Benevolent Union

Central Board of Directors

628 Second Avenue, New York, N. Y. 10016

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Ներկայացում եւ վաւերացում 1973 տարեշրջանի ընդհանուր տեղեկագրի:
2. Ներկայացում եւ վաւերացում 1973 տարեշրջանի ընդհանուր հաշտուութեան:
3. Մասնակի ընտրութիւն Կեդր. Վարչ. ժողովի:
4. Մասնակի ընտրութիւն Հաշուեքննիչ Յանձնախումբի:
5. Առաջարկներ եւ քելադրութիւններ:
6. Գնահատանքի բանահեւեր:

Ի ԳԻՄԱՅ ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Բ. Գ. ԿՐԵԿՈՐԻ
Ատենադպիր

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ
Ատենապետ

Մայիս 6, 1974

Նիւ Եորփ, Ն. Ե.